



# Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

## Կարճ գրություն 15

Սեպտեմբեր 2011

### Պետական գնումներ

# Շեմից ցածր պայմանագրեր

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն
- Գնումների ազգային նորմերի, քաղաքականության և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն
  - Շեմից ցածր պայմանագրերի կանոնակարգումը
  - Գնումների սովորական ընթացակարգեր
  - Հայտերի հրավիրման և հրապարակման մասին կանոններ
  - Ժամանակացույցեր
  - Որակական ընտրություն
  - Բողոքներ
- Պայմանագրի սկզբունքների ազդեցությունը շեմից ցածր գնումների նկատմամբ:



[www.sigmaweb.org](http://www.sigmaweb.org)

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

## Ներածություն

Գնումների վերաբերյալ սույն կարճ գրության քննարկման առարկան շեմից ցածր պայմանագրերն են: Այս համատեքստում “շեմից ցածր” նշանակում է պետական պատվիրատուի կարիքների համար գնումների կատարման համար այն պայմանագրերը, որոնք ցածր են ԵՄ ֆինանսական շեմից. աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրեր: 2010-2011 թվականների համար ԵՄ ֆինանսական շեմն է. աշխատանքների կատարման պայմանագրերի համար 4,845,000 եվրո, 125,000 եվրո ապրանքների մատակարարման և 193,000 եվրո ծառայությունների մատուցման պայմանագրերի համար: Հետագա տեղեկատվության համար, ներառյալ՝ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի համար երկու տարբեր շեմերի վերաբերյալ բացատրությունը, տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 5- ԵՄ ֆինանսական շեմերն ընկալելը*:

Շեմից ցածր պայմանագրերը մեծամասնություն են կազմում պետական պատվիրատուի կողմից շնորհվող պայմանագրերի մեջ և հետևաբար, մեծ կարևորություն ունեն ԵՄ բոլոր Անդամ երկրների համար: Դրանք իրենց բնույթով զգալի ծախսեր են առաջացնում պետական պատվիրատուի համար և գործարար մեծ հնարավորություններ՝ մասնակիցների, հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար:

Շեմից ցածր պայմանագրերն ընդգրկված չեն 2004/18/ԵՀ Հանրային Ոլորտի Հրահանգի (“Հրահանգ”) կարգավորման դաշտում: Սա նշանակում է, որ պետական պատվիրատուի կողմից պայմանագրերի մեծ մասը շնորհվում են՝ օգտագործելով ազգային նորմերը, քաղաքականությունը և ընթացակարգերը: Այնուամենայնիվ, մի շարք այլ կարևոր գործոններ ևս կիրառվում են:

Շեմից ցածր պայմանագրերի համար գնումների գործընթացը պետք է.

- **Լինի արդյունավետ** և հետևաբար, պետք է կիրառի այնպիսի գործընթացներ,

Ժամանակացույցեր և փաստաթղթեր, որոնք արտացոլում են որոշակի գնման կարիքները և արդյունքները

- **Լինի համամասն և խուսափի ոչ անհրաժեշտ թղթաբանությունից**, որպեսզի խուսափեն պետական պատվիրատուին կամ մասնակցին չափազանց բարդ կամ անհամաչափ թղթաբանության կամ վարչական բեռի կամ ծախսեր կատարելուն հարկադրելուց՝ կնքվող պայմանագրի չափին, արժեքին և բարդությանը համապատասխան:
- **Ապահովի պատշաճ մրցակցության**, քանի որ բաց, արդար մրցակցությունը պետք է օգնի՝ հնարավոր մասնակիցների ավելի լայն շրջանակ գրավելու, ներառյալ՝ ՓՄՁ-ները և նոր ստեղծված կազմակերպությունները, որոնց կարող են գրավել հատկապես ցածր արժեք ունեցող պայմանագրերը:
- **Լինի թափանցիկ**, քանի որ թափանցիկ գործընթացն օժանդակում է բաց և արդար մրցակցությանը, ինչպես նաև օժանդակում է կաշառակերությունից և հովանավորչությունից պաշտպանելուն
- **Համապատասխանի Պայմանագրի նորմերին և սկզբունքներին** և եթե վերաբերում է կոնկրետ պայմանագրին, համապատասխանի Եվրոպական Միության Արդարադատության դատարանի կողմից մշակված հիմնական չափանիշներին- տե՛ս սույն կարճ գրության Մաս Գ՝ հետագա տեղեկատվության համար
- **Ամենաարդյունավետ ձևով օգտագործի պետական գումարները**՝ ապահովելով ռեսուրսների լավագույն բաշխումը՝ նպատակադրված արդյունքների հասնելու համար:

Իրենց տնտեսական, սոցիալական և վարչական տարբերություններն արտացոլելով՝ Անդամ երկրները կարող են հավասարակշռել այս և այլ հարցեր, երբ որոշում են, թե ինչպես պետք է լավագույնս կարգավորել շեմից ցածր պայմանագրերի շնորհումը:

Սույն կարճ գրության Մաս Բ-ն նախատեսում է Անդամ երկրների կողմից գնումների ազգային նորմերը, քաղաքականությունը և ընթացակարգերը որոշելիս ստանձնած դիրքորոշումների ամփոփումը: Տեղեկատվությունը վերցված է SIGMA No. 45 հոդվածից (2010 թվական), որը վերլուծում է 22 Անդամ պետություններից ստացված

տեղեկատվությունը (հետագա տեղեկատվության համար, տե՛ս այդ հոդվածը):

Սույն կարճ գրության Մաս Գ-ն արձանագրում է, թե ինչպես Պայմանագրի նորմերը, սկզբունքները և Հրահանգի որոշ դրույթներ կարող են ազդել շեմից ցածր պայմանագրերի վրա: Այս ազդեցությունները որոշակի չափով արտացոլված են Անդամ երկրի՝ շեմից ցածր պայմանագրերի նկատմամբ կիրառվող գնման գործընթացներում, օրինակ, ներառելով հղում՝ հավասար վերաբերմունքի, խտրականության արգելքի և թափանցիկության սկզբունքներին համապատասխանելու անհրաժեշտությանը:

**Տեղեկատվություն գնումների ազգային նորմերի, քաղաքականության և ընթացակարգերի վերաբերյալ**  
(Հետագա խորացված տեղեկատվության համար տե՛ս OECD/SIGMA No. 45 հոդված)

**Շեմից ցածր պայմանագրերի կարգավորումը.** Անդամ երկրների համար գործնականում ընդունված է տարանջատել շեմից բարձր և շեմից ցածր պայմանագրերը և դրանց նկատմամբ տարբեր վերաբերմունք ցուցաբերել՝ գնումների ընթացակարգերի առումով: Անդամ երկրների մեծամասնությունը շեմից ցածր պայմանագրերի շնորհման գործընթացը կարգավորում են օրենքով կամ կանոնակարգով և սահմանում են, որ շեմից ցածր պայմանագրերի շնորհումը հիմնված լինի բաց, արդար և մրցակցային ընթացակարգերի վրա: Միայն շատ քիչ թվով Անդամ երկրներ են շեմից ցածր պայմանագրերի շնորհման գործընթացի կարգավորումն իրականացնում կամավոր ընդունված օրենքների և ուղեցույցերի միջոցով: Անդամ երկրները հաճախ օգտագործում են միևնույն օրենքները կամ կանոնակարգերը՝ շեմից բարձր և շեմից ցածր պայմանագրերի շնորհման գործընթացի ժամանակ, չնայած գործնական կիրառվող փաստացի նորմերը երբեմն տարբեր են լինում:

**Ազգային շեմերը և գնումների սովորական ընթացակարգերը.** Շեմից ցածր պայմանագրերը հիմնականում շնորհվում են պարզեցված ընթացակարգերի և կանոնների միջոցով, որոնք ԵՄ ռեժիմի ամբողջական կիրառումից պակաս խիստ են: Հաճախ է պատահում նաև, որ արժեքով պայմանավորված, շեմից ցածր պայմանագրերը դասակարգվեն երկու կամ երեք լրացուցիչ տեսակների և այս դեպքում այդ պայմանագրերի շնորհման ժամանակ կիրառվում են տարբեր ընթացակարգային պահանջներ և վերջնաժամկետներ: Շեմերի և դրանց հետ կապված ընթացակարգերի նպատակը շատ լավ նկարագրված է SIGMA 45 Հոդվածի համար տրված հարցին Սլովենիայի պատասխանում, “ձևավորել պայմանագրի առարկան և մասնավորապես պայմանագրի գնահատված արժեքը հաշվի առնող շնորհման ընթացակարգեր՝ համամասնության սկզբունքի համաձայն”:

Ուղղակի գնումը, այսինքն՝ մասնակցից ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռք բերումն առանց հայտարարության հրապարակման կամ մրցակցային գործընթաց կիրառելու, հաճախ թույլատրված է շատ ցածր արժեք ունեցող պայմանագրերի շնորհման ժամանակ: Շատ ցածր արժեք ունեցող պայմանագրերի հասկացությունը տարբեր է Անդամ երկրներում, բայց այդ ընթացակարգի օգտագործումը թույլատրելու համար ամենաբարձր արժեքը հիմնականում 5000 եվրոյից 15000 եվրոն է: Այլ երկրներում կարող է կիրառվել ավելի ցածր շեմ:

Պարզեցված ընթացակարգերի այլ օրինակները ներառում են. (ա) պահանջը, որ պետակա պատվիրատուն հայցի գնառաջարկներ, առաջարկներ կամ գրավոր հայտեր՝ որոշակի թվով մասնակիցներից՝ առանց նախնական հայտարարության հրապարակման, այսպիսով ապահովելով մրցակցության որոշակի մակարդակ, և (բ) ձգտում է ստանալ երկու առաջարկ՝ օգտագործելով ազգային համացանցային պորտալները, որի արդյունքում ապահովվում է թափանցիկություն և մրցակցություն, սակայն օգտագործվում է պայմանագրի բնույթին և արժեքին համամասն գործընթաց՝ խուսափելով չափից շատ բյուրոկրատական մոտեցումից:

Շեմից ցածր պայմանագրերի շնորհման համար արժեքի հետ կապված տեսակները և ընթացակարգերը լավագույնս մեկնաբանվում են օրինակի օգտագործմամբ: Ռումինիայում

- Մինչև 15000 եվրո արժեք ունեցող աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը կարող են շնորհվել՝ կիրառելով ուղղակի գնումների ընթացակարգը:
- Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը մինչև 125 000 եվրո և աշխատանքների կատարման պայմանագրերը մինչև 4 845 000 եվրո արժեքով կարող են շնորհվել՝ կիրառելով պարզեցված ընթացակարգեր (հայտերի պահանջ), ինչը նշանակում է, օրինակ, որ
  - պայմանագրի հայտարարությունը պետք է հրապարակվի կենտրոնական ինտերնետ պորտալում (էլեկտրոնային հայտարարությունների պլատֆորմում), բայց պարզեցված ձևով,
  - Հայտերի ներկայացման համար տրվում է 10 օր, որը կարող է նվազեցվել մինչև 6 օր՝ հայտերի ներկայացման էլեկտրոնային տարբերակի օգտագործմամբ (ավելի քիչ ժամանակ է տրամադրվում, քան շեմը գերազանցող պայմանագրերի շնորհման համար)
  - Մորատորիումը տևում է 6 օր՝ շեմը գերազանցող պայմանագրերի շնորհման համար պահանջվող 11 օրվա փոխարեն:
- **125000 եվրոն գերազանցող արժեքով ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը** պետք է շնորհվեն՝ օգտագործելով ԵՄ ընթացակարգերը, բայց կրճատված ժամանակացույցով: Օրինակ, բաց ընթացակարգի համար տրամադրվող ժամանակը 20 օր է (15 օր հայտերի ներկայացման էլեկտրոնային տարբերակի համար), ԵՄ սահմանած 52 օր ժամկետի փոխարեն (47 օր հայտերի ներկայացման էլեկտրոնային տարբերակի կիրառման դեպքում):

**Հրապարակման կանոնները.** Պայմանագրի շնորհման հայտարարությունների և հնարավորությունների հրապարակումը՝ անկախ պայմանագրի արժեքից, կարող է

խրախուսել մրցակցությանը, օժանդակել գնի և որակի հարաբերակցության ստացմանը և նպաստել գործընթացի թափանցիկությանը: Շեմից ցածր պայմանագրերի շնորհման համար հայտարարությունների կամ գովազդի հրապարակումը հաճախ պահանջվում է ազգային նորմերի, քաղաքականության և ընթացակարգերի համաձայն: Կարևոր է, որ այս պահանջները համամասն լինեն պայմանագրի բնույթին և արժեքին, բայց նաև հասանելի՝ թիրախային լսարանին:

Որոշ Անդամ երկրներում պարտադիր է հրապարակումը՝ օգտագործելով ազգային ստանդարտ առցանց պորտալները և/կամ էլեկտրոնային ձևաչափերը, որոնք կարող են օգտագործվել ցանկացած արժեք ունեցող պայմանագրերի շնորհման համար: Այլ երկրները պահանջում են, որ պետական պատվիրատուն հայտարարություն տա նաև իր համացանցային էջում կամ պետական պատվիրատուին հայեցողական իրավունք տրամադրի՝ որոշելու, թե որտեղ հրապարակի հայտարարությունը: Հրապարակումը տեղական կամ ազգային լրատվամիջոցներում ևս կարող է տեղին լինել, բայց ենթադրվում է, որ պետք է քննարկվի, թե արդյոք այդ պահանջները համապատասխան և համամասն են՝ վարչական և ծախսերի առումով, և թե արդյոք դա չի՞ նպաստում է չափազանց բյուրոկրատական մոտեցմանը:

*Տե՛ս Գնումների վերաբերյալ կարճ գրություն 17- էլեկտրոնային գնումներ՝ էլեկտրոնային գնումների մեթոդները և գործիքները օգտագործելու միջոցով հայտարարության հրապարակման և հայտերի ներկայացման վերաբերյալ հետագա տեղեկատվության համար:*

**Ժամանակացույցեր.** Շատ Անդամ երկրներ տարբերակում են մտցնում շեմից բարձր և շեմից ցածր գնումների միջև: Այս տարբերակումները հաճախ ներառում են շեմից ցածր տարբեր արժեքներ ունեցող պայմանագրերի շնորհման համար գնումների ընթացակարգերի ժամանակացույցերի սահմանումը: Ժամկետների կրճատումը և՛ դիմումների, և՛ հայտերի ներկայացման համար, ընդունված պարզեցում է: Երբ սահմանվում են նվազագույն ժամկետներ, ինչը հաճախ է պատահում, ժամկետը տատանվում է դիմումների համար 10-15 օրվա և հայտերի ներկայացման համար՝ 10-25 օրվա շրջանում: Այս ժամկետները հաճախ կրճատվում են՝ էլեկտրոնային

եղամակով ներկայացման դեպքում:

**Որակական ընտրություն.** Մի շարք Անդամ երկրներ կիրառում են որակական ընտրության վերաբերյալ հիմնականում միևնույն կանոնակարգերը շեմից բարձր և ցածր պայմանագրերի շնորհման համար: Հիմնական տարբերությունը շեմից բարձր պայմանագրերի շնորհմանը վերաբերող դրույթներից վերաբերում է որակավորմանը համապատասխանելու ապացույցին, որն արտացոլում է գործընթացի՝ համամասն և ոչ շատ բյուրոկրատական լինելն ապահովելու անհրաժեշտությունը: Օրինակ, որոշ Անդամ երկրներում, մասնակիցները կարող են որակավորմանը համապատասխանելու ապացույցները հատուկ փաստաթղթերի փոխարեն ներկայացնել հայտարարագրի տեսքով: Որոշ Անդամ երկրներում թղթաբանությունը նվազեցնելու համար մասնակիցները պարտավոր չեն տրամադրել այնպիսի ապացույցներ, որոնց վերաբերյալ պետական պատվիրատուն ունի տվյալներ: Պետական պատվիրատուն պետք է ինքը ձեռք բերի այս տվյալները: Տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 7- Մասնակիցների ընտրությունը*՝ Հրահանգի համաձայն որակական ընտրության նկատմամբ կիրառվող պահանջների վերաբերյալ հետագա տեղեկատվության համար:

**Տեխնիկական մասնագրեր.** SIGMA 45 Հոդվածում նշված գրեթե բոլոր երկրներն ունեն միևնույն տեխնիկական մասնագրերը շեմից բարձր և ցածր պայմանագրերի շնորհման համար: Շեմից բարձր պայմանագրերի շնորհման նկատմամբ կիրառվող տեխնիկական մասնագրերի վերաբերյալ նորմերը սահմանված են Հրահանգում և նպատակ ունեն ապահովելու մասնագրերի թափանցիկ և ոչ խտրական լինելը:

**Շնորհման չափորոշիչները և հայտի գնահատումը.** Հրահանգում շնորհման չափորոշիչների ընտրությունը հիմնված է կա՛մ ամենացածր գնի, կա՛մ տնտեսապես ամենաշահավետ հայտի վրա: Անդամ երկրների մեծամասնության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանք այս ընտրությունը թույլատրում են



նան շեմից ցածր պայմանագրերի շնորհման ժամանակ: Տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 8- Շնորհման չափորոշիչների սահմանումը* և *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 9- Հայտերի գնահատումը և Պայմանագրի շնորհումը*՝ հետագա տեղեկատվության համար, թե ինչպես պետք է վարվել շեմից բարձր պայմանագրերի շնորհման ժամանակ:

**Բողոքների քննարկման կարգը.** Եվրոպական Հանձնաժողովի կարծիքը շեմից ցածր պայմանագրերի և այն պայմանագրերի շնորհման վերաբերյալ, որոնք դուրս են Հրահանգի կարգավորման դաշտից կամ լիովին չեն կարգավորվում Հրահանգով, այն է, որ իրավունքի պաշտպանության հասանելի միջոցները չպետք է լինեն պակաս արդյունավետ, քան նրանք, որոնք կիրառվում են ազգային օրենսդրության վրա հիմնված համանման բողոքների նկատմամբ, իսկ դատական պաշտպանության իրավունքը չպետք է դարձնեն անհնար կամ չափազանց բարդ: Գործնականում, ուսումնասիրված երկրների մեծ մասը իրավունքի պաշտպանության միջոցների նկատմամբ ընդունել է միևնույն մոտեցումը շեմից բարձր և ցածր պայմանագրերի շնորհման համար: Տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 12- Իրավունքի պաշտպանության միջոցներ*՝ հետագա տեղեկատվության համար:

### **Պայմանագրի սկզբունքների և այլ իրավական սկզբունքների ազդեցությունը շեմից ցածր գնումների նկատմամբ**

**Գրություն.** Հետևյալ բաժինը նախատեսում է *Պետական գնումների Հրահանգին ոչ ենթակա կամ ոչ լիովին ենթակա պայմանագրերի նկատմամբ Համայնքի կիրառելի իրավունքի մասին Հանձնաժողովի Մեկնաբանական Հաղորդագրության (2006/C 179/02)*՝ կետերով նշված ամփոփումը: Հետագա տեղեկատվության համար, տե՛ս ամբողջական ՄՀ:

**Պայմանագրի նորմերը և սկզբունքները.** Պետական պատվիրատուի կողմից կազմակերպվող այն գնման ընթացակարգերը, որոնք ներառված են Պայմանագրի կարգավորման դաշտում, պետք է համապատասխանեն ԵՀ Պայմանագրի

կանոններին և սկզբունքներին (հիմա ԵՄԳՊ): Գնումների համատեքստում այս կանոններն ու սկզբունքները ներառում են.

- Ապրանքների ազատ շրջանառությունը
- Հիմնադրման իրավունքը
- Ծառայությունների մատուցման ազատությունը
- Խտրականության արգելքը և հավասար վերաբերմունքը
- Թափանցիկությունը
- Համամասնությունը
- Փոխադարձ ճանաչումը

**Թափանցիկության պարտավորությունը.** ԵՄԱԴ-ն սահմանել է, որ ազգության հիման վրա խտրականության արգելքի և հավասար վերաբերմունքի սկզբունքները ենթադրում են թափանցիկության ապահովման պարտավորությունը:

**Հիմնական չափանիշները.** ԱԵԴ-ն մշակել է հանրային ոլորտի պայմանագրերի շնորհման համար մի շարք հիմնական չափանիշներ, որոնք ուղղակիորեն բխում են Պայմանագրի կանոններից և սկզբունքներից: ԵՄԱԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ թափանցիկության պարտավորությունը “կազմված է, ի օգուտ ցանկացած հնարավոր մասնակցի, որոշակի հայտարարության մակարդակ ապահովելուց, որը բավարար է մրցակցության համար՝ բաց և, վերանայվող ընթացակարգերի առումով, անկողմնակալ լինելու հնարավորություն տալու համար”:

ՄՀ-ում նշված է, որ հիմնական չափանիշները կիրառվում են այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կապ ունեն ներքին շուկայի հետ և այլ Անդամ երկրներում գործող տնտեսավարող սուբյեկտների համար հավանական հետաքրքրություն են ներկայացնում: Տե՛ս ներքոնշյալ վանդակի գրությունը:

Եթե պետական պատվիրատուն հանգում է եզրակացության, որ տվյալ պայմանագիրը վերաբերում է ներքին շուկային, պարտադիր չէ, որ պետական պատվիրատուն գործի Հրահանգին համապատասխան, բայց պետք է պայմանագիրը շնորհի հիմնական չափանիշներին համապատասխան:

## ԵՄ ներքին շուկային վերաբերելը

Եվրոպական Հանձնաժողովը կարծում է, որ առանձին պետական պատվիրատուների պարտականությունն է՝ որոշել, թե արդյոք նախատեսված պայմանագրի շնորհումը կարող է իրենից հավանական հետաքրքրություններ կայացնել այլ Անդամ երկրներում գործող տնտեսվարող սուբյեկտների համար, և արդյոք այս որոշումը պետք է հիմնված լինի յուրաքանչյուր առանձին գործի հանգամանքների վրա: ԵՀ նախատեսում է գործոնների օրինակներ, որոնք կարող են հաշվի առնվել, ներառյալ՝ պայմանագրի առարկան, դրա գնահատված արժեքը, կոնկրետ շուկայի չափը և կառուցվածքը, առևտրային գործունեությունը և իրականացման վայրի աշխարհագրական տեղանքը:

**Հիմնական չափանիշներին համապատասխանելը.** Եվրոպական Հանձնաժողովն իր ՄՀ-ում հիմնական չափանիշները տեղադրել է երեք վերնագրերի տակ. “հայտարարում”, “պայմանագրի շնորհում” (այսինքն՝ պայմանագրի շնորհմանը վերաբերող ընթացակարգերի անկողմնակալություն) և “դատական պաշտպանություն”: Այն նաև սահմանում է, թե գործնականում ինչ են նշանակում հիմնական չափանիշները, հետևյալ կերպ.

- **Համապատասխան հայտարարության ապահովման պարտականությունը.** սա պահանջում է հայտարարության այնպիսի մակարդակ, որն անհրաժեշտ է, որպեսզի շուկան բաց լինի մրցակցության համար, և ապահովում է, որ այլ Անդամ երկրում գործող կազմակերպությունը պայմանագրի վերաբերյալ մինչև դրա շնորհումն ունենա համապատասխան տեղեկատվություն՝ այդ պայմանագիրը ստանալու հարցում իր հետաքրքրությունն արտահայտելու հնարավորություն ունենալու համար: ՄՀ-ն նախատեսում է հայտարարության հրապարակման համապատասխան և հաճախ օգտագործվող միջոցների օրինակներ:
- **Պայմանագրի շնորհմանը վերաբերող սկզբունքներ.** շնորհումը պետք է համապատասխանի Պայմանագրի նորմերին և սկզբունքներին, որպեսզի

երաշխավորի շնորհման անկողմնակալ ընթացակարգեր և արդար մրցակցություն՝ պայմանագրի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող բոլոր մասնակիցների միջև: Սա ներառում է.

- Պայմանագրի առարկայի ոչ խտրական ձևով նկարագրությունը
  - Հավասար հասանելիություն՝ բոլոր Անդամ երկրներից մասնակիցների համար
  - Դիպլոմների, հավաստագրերի և ձևական որակավորումների այլ ապացույցների փոխադարձ ճանաչում
  - Համապատասխան ժամկետների օգտագործում
  - Թափանցիկ և օբյեկտիվ մոտեցման օգտագործում
- **Ռատական պաշտպանություն.** Գոյություն ունի նաև պահանջ՝ ապահովելու, ընթացակարգի վերանայման հասանելի, անկողմնակալ և արդյունավետ մեխանիզմներ:

### Մեկնաբանություն

Ինչպես պարզ է սույն կարճ գրության Մաս Բ-ից, Անդամ երկրներում գործող այն նորմերը, քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք վերաբերում են շեմից ցածր պայմանագրերի շնորհմանը, հիմնականում նպատակ ունեն արտացոլել այս սկզբունքները: Կարևոր է նշել, որ գործնականում շատ Անդամ երկրներ ունեն նաև այնպիսի կանոններ, որոնց միջոցով հայտարարություն տալու և ամբողջական մրցակցային գործընթաց իրականացնելու պարտականությունից արդյունավետ կերպով ազատվում են շատ ցածր արժեք ունեցող, շեմից ցածր պայմանագրերի շնորհման ընթացակարգերը: Այս պրագմատիկ լուծումն ընդունում է, որ շատ ցածր արժեք ունեցող պայմանագրերի մեծամասնությունը, անհավանական է, որ վերաբերեն ներքին շուկային և կարիք կա ապահովելու, որ պայմանագրերի գնման համար օգտագործվող գործընթացը համամասն լինի գնվող պայմանագրին:

## Գրություն միավորման մասին

Միավորման վերաբերյալ նորմերի ազդեցությունը շեմից ցածր պայմանագրերի շնորհման ընթացակարգի վրա. Շեմից ցածր պայմանագրերի շնորհման հետ կապված առանձնահատուկ վտանգը գալիս է միավորման վերաբերյալ կանոնների գործարկումը հաշվի չառնելուց: Այն կանոնները, որոնք սահմանված են Հրահանգում, պահանջում են, որ պետական պատվիրատուն միավորի աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման առանձին պայմանագրերի չափաբաժինների արժեքները, որոնք պետք է շնորհվեն միաժամանակ, կոնկրետ ծրագրի շրջանակներում: Յուրաքանչյուր առանձին պայմանագրի արժեքը կարող է պակաս լինել, քան ԵՄ համապատասխան ֆինանսական շեմը, բայց երբ միացնում ենք իրար, շեմից ցածր այս պայմանագրերի ընդհանուր արժեքը կարող է գերազանցել ԵՄ ֆինանսական շեմը: Այս դեպքում Հրահանգը պետք է կիրառվի շեմից ցածր յուրաքանչյուր պայմանագրի շնորհման նկատմամբ:

Նմանապես, եթե պետական պատվիրատուն ունի առանձին չափաբաժիններով միաժամանակ ապրանքների մատակարարման պայմանագրի շնորհման պահանջ, ապա գնումների ողջ արժեքը պետք է միավորվի՝ սահմանելու, թե արդյոք գնումները գերազանցում են ԵՄ ֆինանսական շեմը, թե ոչ:

Երբ պետական պատվիրատուն ունի կրկնվող կամ նմանատիպ պահանջներ, ապա Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու և միևնույն ժամանակ գնումների վարչական բեռը նվազեցնելու գործնական եղանակը գնումները կենտրոնացված և/կամ շրջանակային համաձայնագրերով իրականացնելն է: Տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 19-Շրջանակային համաձայնագրեր* և *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 20-Գնումների կենտրոնական մարմիններ*՝ հետագա տեղեկատվության համար:

Շեմերի և միավորման կանոնների վերաբերյալ հետագա տեղեկատվության համար, տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 5- ԵՄ Ֆինանսական շեմերի ընկալումը*:

### Հետագա ընթերցանություն.

OECD SIGMA համացանցային էջ <http://www.sigmaweb.org> SIGMA 45 Հոդված (2010 թ.) Պետական Գնումները ԵՄ Անդամ երկրներում- Պայմանագրերի կանոնակարգումը, որոնք ցածր են ԵՄ շեմերից և այն ոլորտներում են, որոնք ընդգրկված չեն ԵՄ Հրահանգների Մանրամասնեցված Կանոններում:

Եվրոպական Հանձնաժողովի համացանցային էջ

[http://ec.europa.eu/internal\\_market/publicprocurement](http://ec.europa.eu/internal_market/publicprocurement)

Պետական գնումների Հրահանգի կարգավորման դաշտից ամբողջապես կամ մասնակի դուրս կատարվող գնումների նկատմամբ Համայնքի կիրառելի իրավունքի մասին Եվրոպական Հանձնաժողովի Մեկնաբանական Հաղորդագրության (2006/C 179/02) համար